

13 Եւ առեալ ի ձեռն զգէն¹ գիտութեան, զի յաղթող երեւեսցի. եւ առաքէ զգրեալս ի ձեռն բարեսէր² մեծի եւ պատուական նախարարին Մամիկոնե-նին³ Համազասպայ, որ եւ պատճառ իսկ եղեւ նմա այսրէն դարձին. զի յաղ-բերէն գիտութեան նորա արբցեն միւսանգամ մարդիկ եւ պտղաբերք լիցին Աստուծոյ զարդարութիւն:

14 Վասն որոյ եւ գերորդ Պատմութիւնս Հայոց երանելի իմ Ղազար պատմագրեաց: 15 Ընդ նմին գրեցաք եւ զԹուղթս, զի ընթերցասերքն զՊատմութիւնս կարդալով, ընդ նմին եւ զԹուղթս ընթերցեալ՝ ⁴զփորձ առ-ցեն նորա լաւութեան բանին:⁵

16 Փրկիչն⁶ մեր⁷ եւ Տէր Յիսուս Քրիստոս քաջ զգուշացուցանելով պա-տուհրէր առաքելոցն, թէ *Յորժամ զամենայն արդարութիւնս կատարիցէք՝ ասասցի՛ք, եթէ ծառայք անպիտանք եմք*⁸բ: 17 Իսկ ընդէ՞ր եւ հոգեւոր մշակն Աստուծոյ սուրբն Պաւղոս, զկծեալ իմն երբեմն վասն արանց խանդացելոց ընդ մեծ շնորհն որ էր ի նմա, եւ բանս անհանճարս խաւսելոյ⁹ ընդ նորա-դարձ աշակերտեալսն, ի կործանումն լսողացն,- զորս անուանադրեալ¹⁰ սուտ մշակս կոչէ,- եւ չկարացեալ տանել գայթակղութեանն՝ արտաքոյ Քրիս-տոսի կանոնին վարեցաւ, եւ անձամբ զանձին լաւութիւնս եւ զճգունս մեծա-մեծ պարծանաւք գրեալ մի ըստ միոջէ կարգեաց. եւ ոչ իմն ըստգտեալ խո-տեցաւ, այլ կաց մնաց ի նմին առաքելութեան պայծառապէս: 18 Եւ եթէ ըն-դէ՛ր այս այսպէս լինէր՝ ծանիցէ քննողն, թէ կարասցէ, ապա թէ ոչ՝ լռեսցէ:

19 Արդ՝ դու, տեր, այր քաղցր ես եւ խոնարհամիտ եւ արդարահայեաց եւ կշռաքնին¹¹, եւ հաւատոց Աստուծոյ առաւել ընտանի¹², որպէս եւ ամե-նայն նախնիքն քո: 20 Եւ ես անպիտանս եւ ամենեցուն կղկղանք, թեպէտ եւ

1 Ձ. ըգէն

2 Ձ. բարեսէր

3 ՏՏ. մամիկոնեի

4 Ձ. *Յառաջաբանից յետոյ անընդհատաբար շարունակում է Թուղթը՝* զփորձ առցեն նորա լաւութեան բանին: փրկչին տեառն մեր եւն:

5 Ձ. *Ներքեւի լուսանցքում ունի* ճգնաւոր էր աղան յազգէն արծրունեաց, բնակեալ ի յայրն աղանայ ի յանբերդ

6 Ձ. փրկիչն-ից առաջ խաչանշան, եւ ներքեւի լուսանցքում ծանօթութիւն՝ նոր, շղագիր տառերով՝ այս է սկիզբն թղթոյն դազարու փարպեցոյ. Վ. *այստեղ ունի վերնագիր՝* Թուղթ Ղազարու վարդապե-տի... Մեղադրութիւն ստախօս արեղայից, զոր առաքեալ է յամիթ քաղաքէ

7 Ձ. *Նախ՝* փրկչին տեառն մեր, *ապա ուղղած՝* փրկիչն մեր

8 Վ. անպիտան եմք

Բ Ղուկ. ԺԷ 10

9 Վ. իստելոց

10 Վ. զայս անուանադրեալ. Ձ. անուանագրեալ

11 Վ. կշռաքնին

12 ՁՏՏ. ընդանի